

Աշոտ Ս. Աբրահամյան  
Բանասիր. գիտ. թեկնածու

## ՆՇԱՆԸ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ԵՐԱԶՈՒՄ ԷՐ ՉԱՐԼԶ ՓԻՐՍԸ\*

**Բանալի բառեր** – նախադասություն, ասույթ, իրակա-  
նություն, ներկայացում, իրադրություն, պատկերում, հնչեղան-  
գայություն, վերաբերայնություն, ստորոգայնություն, ուրվա-  
գիծ, հեռանկար, ցուցանշան, խորհրդանշան, պատկերանշան,  
դիագրամ:

### Մուտք

Երբ լեզուն ու արտալեզվական իրականությունը հանդիպում են, տեղի է ունենում իրականության ներհուսք լեզվի մեջ՝ արտալեզվակա-  
նի սուբյեկտիվացում, և դրա հետ միասին՝ լեզվականության ներհուսք  
իրականության մեջ՝ լեզվականի օբյեկտիվացում:

Այդ փոխներթափանցման մեջ ակտիվ կողմը լեզուն է. իրականությունն իր տեղում թողնելով՝ լեզուն միաժամանակ ամբողջությամբ գրավում է նրա տարածքը, վերադրվում է նրա վրա, լեզվական ծածկույթի տակ է առ-  
նում արտալեզվական իրականությունը: Արտալեզվական իրականությանը մտալեզվական, ճանաչողահաղորդակցական կերպարանք է տրվում: Միտ-  
քը և լեզուն ձեռք ձեռքի տված քայլ առ քայլ գրավում են արտալեզվական իրականության տիրույթները, պատկերում են իրականությունն իրենց բե-  
կումով և դյուրահավատ մարդուն իբրև անաչառ արտացոլում ներկայաց-  
նում են իրենց ստեղծած պատկերը: Արտալեզվական օբյեկտիվ իրականու-  
թյան լեզվական սուբյեկտիվ ստեղծագործական վերապատկերումը ներկա-  
յանում է որպես **արտապատկերում**: Իրականության լեզվական սուբյեկտիվ պատկերի կադապարներն ընկալվում են իբրև իրականության օբյեկտիվ բնութագրիչներ: Կատարվում է իրականության լեզվական վերաձևում-վե-  
րաձևավորում: Իրականությունը, որը լեզվից անկախ արտալեզվական նյու-  
թի արտալեզվական ձևով է կազմված, վերցվում է իբրև ասես անձն նյու-  
թի զանգված, որին նրա մտավոր բեկման մեջ լեզվական ձև է հաղորդվում, և դրանից հետո իրականությունը այդ ձևով է ոչ միայն պատկերվում, այլև պատկերացվում. ջնջվում են օբյեկտիվի ու սուբյեկտիվի սահմանները, օբ-

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԿՎ համահայկական հանդես

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 03.11.2018:

յեկտիվը ներկայանում է այն կերպարանքով, որը նրան վերագրում է սուր-յեկտիվը, լեզվականության նվաճողական ծավալումը և արտալեզվական իրականության լեզվականացումը գերագույն չափերի են հասնում<sup>1</sup>։ «Իմ լեզվի սահմանները նշանակում են իմ աշխարհի սահմանները»<sup>2</sup>։

## 1. Իրականություն և լեզու

Փիլիսոփաները սոփեստների իմացաբանական կասկածամտությունը հարստացնում են աստվածաբանության դիտարկման առարկայի մտավոր անձանաչելիության վերաբերյալ պնդումը հաստատելու համար միջնադարյան աստվածաբանության մեջ առաջ քաշված դրույթների մեթոդական հիմունքների փոխառումով և արդեն փիլիսոփայության դիտարկման առարկայի մտավոր անձանաչելիության վերաբերյալ պնդումը ձևակերպում որպես «զուտ բանականության քննադատություն»։ Ծագում է իրականության և լեզվի-մտքի հավաստի համաձևության մերժման հետևանքով առաջ եկած անորոշությունը հաղթահարելու խնդիրը։ Նախածին գաղափարների նկատմամբ նույնիսկ մեծագույն համակրանք տածողի համար անընդունելի պիտի համարվեր դրանց ինքնանպատակ լինելը։ Նպատակի որոնումը գոնե լեզվափիլիսոփայական աշխարհընկալման մեջ հանգեցնում է նրան, որ մերժվում է ոչ թե համաձևությունը, այլ նրա՝ նախկինում ընդունված ուղղվածությունը։ Եթե մտքի լեզվական արտահայտությունը չի բխում իրականությունից, իրականության կրկնակը չէ, սակայն ծառայում է իրականությունը նշանակելուն, ուրեմն ստիպված իրականությունը պիտի համապատասխանեցվի այդ արտահայտությանը։ Այսպիսի մտայնությունը միջնադարյան ռեալիզմի վերածնունդ<sup>3</sup> է՝ նոր մարմնավորումով. սա «մարդկային» ռեալիզմ է, քանի որ աստվածային բանականության արարչագործ ուժը նրա մեջ փոխանցված է մարդկային բանականությանը (ընդ որում, ի տարբերություն սուբյեկտիվ իդեալիզմի, ոչ թե անհատական, այլ հանրային բանականությանը<sup>4</sup>), և «ձևային» ռեալիզմ է, քանի որ այս դեպքում խոսվում է աշխարհի ոչ թե հիմնանյութի (սուբստանցի), այլ ձևի սերման մասին, այլ կերպ ասած՝ ոչ թե արարման, այլ կաղապարման մասին<sup>5</sup>։ «....

1 Սա արձանագրվում է նաև իրականության բնութագրումներում։ Արտալեզվական իրականության **խոսքակերպ** պատկերացման դրսևորումներից է «բնության գրքի» ըմբռնումը, որին դիմել են միմյանցից շատ տարբեր հայացքների հետևորդներ՝ նվիրյալ աստվածաբան Հովհան Ոսկեբերանից մինչև անհնազանդ հավատացյալ Կամպանելա, աստղագետ Գալիլեյից մինչև բարոյախոս Ռուսո, լուսավորական Գյոթեից մինչև հեղափոխական Նալբանդյան։ Այս մոտեցման՝ տարբեր ուղղվածություններ ունեցող հետագա փոխակերպումներն են իրականությունը ոչ թե մեկ գրքի, այլ գրադարանի պատկերով ներկայացնելը (Քոտորլզ, Բորխես) և գոյություն ունեցող ամեն ինչ տեքստ համարելը (Դեբիդա)։ Հաջորդ քայլը կատարվում է այն բանից հետո, երբ լեզվաբանությունն իր ուսումնասիրությունների կիզակետում դնում է լեզվական համակարգը, որը նաև լեզվականի և իրականի զուգադրումների մեջ է ներառվում. իրականությունն արդեն **լեզվակերպ** բնութագրում է ստանում, հնարավոր են դառնում (թեկուզ որոշ վերապահումներով) այնպիսի ձևակերպումներ, ինչպես՝ «աշխարհի ատյոթներ», «աշխարհի բառեր», «արտալեզվական ստորգում», «աշխարհի ոչ լեզվական «քերականություն»» (Աթայան), «իրականության ձևաբանություն» (Ռուդնև)։

2 **Витгенштейн Л.**, Философские работы, ч. I, М., «Гнозис», 1994, с 56.

3 Փիլիսոփայության պատմության մեջ ավելի հետ գնալով՝ կարելի է նաև ասել՝ պլատոնականության վերածնունդ՝ լեզվի հաշվառումով՝ մի տեսակ լեզվաբանական նորապատնականություն, ըստ որի՝ իրերն արդեն ոչ թե գաղափարների, այլ բառերի սովերենն են։

4 Այդպիսով աշխարհի լեզվական պատկերին հավատալը լռելյայն հավասարեցվում է զանգվածային հոգեախտի։

5 Չբացառենք նաև, որ այդպիսին է ամեն մի արարում։ Տիեզերաստեղծման անգամ կրոնական պատկերումն ըստ էության ներկայացնում է անցում քառսից կոսմոսին՝ նյութի անտարրորշ զանգվածի տարրորշում-կազմակերպում. «.... քո ձեռքի համար, որ անկերպարան նյութից հաստատեց այս աշխարհը»

յուրաքանչյուր տվյալ պահի լեզուն տեղաբաշխում և կազմակերպում է տիեզերքը նորովի»<sup>6</sup>:

Այն համոզմունքից, որ ամեն ինչ սուբյեկտով կամ սուբյեկտներով է պայմանավորված, և ինքնուրույն գոյություն ունեցող «իրական աշխարհի վարկածը» հետաքրքիր, սակայն ամենևին ոչ պարտադիր վարկած է<sup>7</sup>, նուրբնալիստական զգալի չափաբաժին պարունակող եզրակացություն է արվում. «Մենք աշխարհի ընդհանրության մեջ համոզվում ենք միայն լեզվական փոխըմբռնման շնորհիվ»<sup>8</sup>: Աշխարհի պատկերի մեջ ճանաչող-մտածող-խոսող սուբյեկտի դերի բացարձակացումը գալիս է երկրնտրանքի անխուսափելիության ենթադրությունից: Բայց այդ ենթադրության հիմքում մի թյուրիմացություն կամ ծայրահեղացում կա. նույնության բացակայությունը համարվում է հակադրության առկայության վկայություն, որի հետ էլ կապվում է երկրնտրանքը, և աչքաթող է արվում տարբեր լինելու ու միաժամանակ համապատասխանելու հնարավորությունը, որը նույնպես նույնության այլընտրանք է: Համապատասխանության (և միաժամանակ որոշ անհամապատասխանության) գաղափարն են գոյության, ըմբռնման և նշանակման կերպերի իրենց տեսության հիմքում դրել միջնադարյան մոդիստները, և ըստ էության նրանց տեսության ժամանակակից ձևակերպումն է տալիս XX դարի փիլիսոփան. «Նախ՝ գոյություն ունի կեցությունը՝ ինքնին, ինքն իրենից և ինքն իր համար.... Երկրորդ՝ գոյություն ունի մտածողությունը (կամ գիտակցությունը), որն արտացոլում է իրականությունը.... ամենաընդհանուր, այսինքն՝ **իմաստային** եղանակով.... Երրորդ՝ իր զարգացման ընթացքում մտածողությունը, որն ի սկզբանե միայն արտացոլում էր իրականությունը, հիմա ինքնուրույն գործուն զարգացման ուղի է բռնում: Այն ծնունդ է տալիս ասես իր սեփական իրականությանը.... հենց լեզուն է մտքի անմիջականորեն տրված իրականությունը»<sup>9</sup>:

Երբեմն էլ օբյեկտիվի և սուբյեկտիվի բացարձակ ու անվերապահ տարանջատման անհնարիության արդարացի արձանագրման հիման վրա դրանց հարաբերության հարցն առկա է թողնվում<sup>10</sup>, ինչպես ասում է բանաստեղծը, «չգիտեմ՝ կա, թե չկա» մոտեցումով: Այս ընդհանուր իմացաբանական հարցը լեզվական-լեզվաբանական հայեցակետով դիտարկվելիս հանգում է Օգդենի և Ռիչարդսի եռանկյան<sup>11</sup> երկու գագաթների փոխհարաբերությունը որոշելուն. խնդիրը հիմնականում նույնն է մնում, սակայն ավելանում է լեզվական նշանակիչի հետ այդ երկուսի փոխհարաբերու-

(Իմաստություն Սողոմոնի, 11, 18): Ածավել ևս այդպես է պատկերացվում տիեզերաստեղծումը ժամանակակից տիեզերագիտության մեջ, որի՝ ամենամեծ տարածում ստացած տեսության համաձայն՝ տիեզերքի այժմյան վիճակը նյութի խտության փոփոխության, այսինքն՝ նյութի ձևափոխության արդյունք է (տես **Հորինգ Ս. Ու.**, Ժամանակի համառոտ պատմություն. Մեծ պայթյունից մինչև սև խոռոչներ, Եր., «Հայկական հանրագիտ. գլխ. խմբ.»., 2001, հատկապես էջ 44-54, 122-130):

6 **Розеншток-Хюсси О.**, Речь и действительность, М., «Лабиринт», 1994, с 21.  
7 Տես **Шредингер Э.**, Мой взгляд на мир. М., Книжный дом «ЛИБРОКОМ», 2009, հատկապես էջ 124-126:  
8 Նույն տեղում, էջ 93:  
9 **Лосев А. Ф.**, Языковая структура, М., МГПИ им. В. И. Ленина, 1983, с 147.  
10 Հմմտ., օր.՝ «Օբյեկտիվ-իրական արտաքին աշխարհ: Ա՛յ, եթե այն տրված լիներ մեզ երկու անգամ. մի անգամ՝ ինքնին («օբյեկտիվորեն»), իսկ մյուս անգամ՝ մեր ընկալման մեջ («սուբյեկտիվորեն»): Այդ ժամանակ տեսական փիլիսոփայությունը զուտ սուբյեկտիվը զուտ օբյեկտիվի հետ զուգադրելու մեջ ոչ մի խնդիր չէր ունենա: Ավաղ, գոյը մեզ տրված է միայն մեկ եղանակով՝ օբյեկտիվ-սուբյեկտիվ» (**Абрамян Л.-А.**, Тетрадь Sigma. Размышления на философские темы, Ер., «Лимуш», 2008, с. 13):  
11 Տես **Ogden C. K., Richards I. A.** The Meaning of Meaning. N. Y., «Harcourt, Brace & World», 1964, էջ 11:

յունը գնահատելու անհրաժեշտությունը, ինչի հետևանքով ճանաչողականը ներկայանում է որպես լեզվաճանաչողական:

Եթե լեզուն բնությունածին է համարվում<sup>12</sup>, երկու ոլորտների համապատասխանությունն ինքնաբերաբար ենթադրվում է, և նրա վերաբերյալ ընդհանրապես հարց չպիտի առաջանա: Լեզվի այսպիսի մեկնաբանումը ենթադրում է, որ աշխարհի լեզվական արտահայտումը պետք է որ լինի էության երևութավորման նման բնական գործընթաց, որի լեզվաբանական գնահատումը այլևս չի կարող տրվել սովորական լեզվաբանական ըմբռնումներով, ասենք՝ Բյուլերի «արտահայտում – դիմում – ներկայացում» եռանդամ համակարգով<sup>13</sup>. այստեղ միահյուսված են հանդես գալիս արտահայտումը և ներկայացումը, քանի որ հենց արտահայտվածն է ներկայացվում, կամ ներկայացվելիքն է արտահայտվում (մարդկանց լեզվական հաղորդակցման մեջ այս իրավիճակին նման դեպքը միայն ձայնարկություն պարունակող խոսքն է, որով խոսողն իր հուզական վիճակն է ներկայացնում. իհարկե, նույնիսկ այդպիսի խոսքում ներկայացումն ու արտահայտումը լիովին չեն նույնանում, քանի որ նույնը չեն ձայնարկության՝ որպես բառի կանոնարկված իմաստը և մարդու ինքնաբուխ ապրումը):

Դրան հակառակ՝ մարդածին լեզվին երկու մոտեցումների (լեզուն որպես իրականության կաղապար կամ իրականությունը որպես լեզվի կաղապար) դեպքերում էլ անխուսափելիորեն քննարկման առարկա է դառնում համապատասխանության կամ անհամապատասխանության խնդիրը: Սակայն անկախ այդ մոտեցումների միջև ընտրությունից՝ պարզ է, որ նշանակող-ներկայացնող կամ առնվազն այդպիսի միտում ունեցող կաղապարը չի կարող բացարձակ ինքնահնար «օրինանշան» (Փիրս) լինել, այլապես չի ծառայի իր հիմնական նպատակին՝ իրականության մասին տեղեկատվություն հաղորդելուն<sup>14</sup>: Որպես արդյունք՝ շեղման հանդուրժելի չափի շրջանակում ի վերջո ստացվում է արտալեզվական աշխարհին ինչ-որ չափով նման և միաժամանակ նրանից ինչ-որ չափով տարբերվող պատկեր, որը, այդպիսով, կարող է եթե ոչ ցույց տալ, ապա գոնե հուշել, թե ինչպիսին է աշխարհը<sup>15</sup>: Նույնիսկ երբ հաղորդման նպատակը իրականում չեղածը ներկայացնելն է (հնարանքի տարբեր տեսակները՝ բարոյապես ամենացածր ստից մինչև բարոյապես ամենաբարձր ստեղծագործություն), մինևույն է, ձևականորեն պահպանվում են իրականության ներկայացման սկզբունքները, և հենց դրանով է հավաստիության պատրանք ստեղծվում: Այս ընդհանուր օրինաչափությունը չի գործում մեկ դեպքում: Մոդեռնիզմի որոշ ուղղություններ ընդհանրապես որևէ բան արտացոլելու նպատակ չեն դնում իրենց առաջ, դրանից էլ բխում են գոյություն ունեցող լեզվի նկատմամբ «անհաղթահարելի ատելության»<sup>16</sup> իրավունքի հռչակումը, «շարահյուսույթ-

12 «... լեզվում ինքնարտահայտվում է ինքը՝ աշխարհը» (Гадмер Х.-Г., Истина и метод: Основы философской герменевтики, М., «Прогресс», 1988, с. 520):

13 Տե՛ս Բյուլեր Կ., Теория языка. Репрезентативная функция языка, М., «Прогресс», 1993, էջ 34:

14 Ավելին, օրինանշան-խորհրդանշան ընդհանրապես չի կարող լիովին ինքնաբավ լինել. նրա ծագումնաբանական հենարաններն են անմիջական կապը (ցուցանշանը) և նմանությունը (պատկերանշանը). տե՛ս Փիրс Ч. С., Избранные философские произведения, М., «Логос», 2000, էջ 186:

15 Հմտ. «... պատշաճ շրջափայցության դեպքում լեզվի հատկությունները մեզ կօգնեն հասկանալու աշխարհի կառուցվածքը» (Рассел Б., Исследования значения и истины, М., «Идея-Пресс», «Дом интеллектуальной книги», 1999, с. 387):

16 Поппеина общественному вкусу, М., «Изд. Г. Л. Кузьмина», 1912, с. 3.

յունը ոչնչացնելու» և «բառը նախադասություն-պարբերության վանդակից բաց թողնելու»<sup>17</sup> ցանկությունը, «հնչյունային ռունրի պես նետված բառի»<sup>18</sup> գովերգումը, «լեզվի հաղթահարման»<sup>19</sup> կոչը. լեզվական ընդունված ձևերի բովանդակալիցության հետ, բնականաբար, մերժվում է նաև նրանց օգտագործման կանոնների պահպանման անհրաժեշտությունը: Բայց այս բացառությունը դարձյալ օրինաչափությունն է հաստատում, քանի որ ակնհայտ է դարձնում, որ օրինաչափության խախտում կատարվում է միայն հատուկ դիտավորություն ունենալու դեպքում (ի դեպ, այդպիսի դիտավորության կապակցությամբ հետաքրքիր է՝ Ապոլիները կստեղծեր արդյոք «սյուրռեալիզմ» անվանումը, եթե իմանար, որ օրերից մի օր նկարչի հանձարեղության անհերքելի վկայություն է համարվելու նրա բեղերի երկարությունը):

Իրականության լեզվական ընդօրինակման հաջողություններն ու անհաջողությունները կարելի է կապել լեզվի նշանային բնույթի վերաբերյալ չվերացող տարակարծությունների ու չմարող վիճաբանությունների հետ: Արտալեզվական իրականության «ներունակորեն լեզվական»<sup>20</sup> լինելը բնականության երանգ է հաղորդում բոլոր լեզվական նշաններին: Բայց դա միայն հավելյալ երանգ է: Իսկ այդ նշանների հիմնական բնութագրումը երկու կարգի է լինում: Դրանք «պատճառաբանված» են կոչվում այն դեպքերում, երբ լեզվին հաջողվում է հաղթական ավարտին հասցնել իրականության կաղապարումը՝ այդ անելով այնպես համոզիչ, որ իրականության՝ հենց այդպիսին լինելու վերաբերյալ կասկած չառաջանա: Իսկ այն դեպքերում, երբ նշանակվող արտալեզվական իրողության և այն նշանակող լեզվական միավորի կամ կառույցի միջև չհաղթահարված միջակայք է մնում, և լեզվական կաղապարման փորձը դրա հետևանքով թեկուզ մասնակիորեն անհաջողության է մատնվում, միշտ էլ կարելի է վկայակոչել «պայմանական» լեզվական նշանի մասին փրկարար դրույթը. անգամ այդ դրույթով առանձնապես չխանդավառված Սոկրատեսն ընդունում էր, որ անվանումներ տալու վարպետության տարբեր մակարդակներ են լինում<sup>21</sup>:

## 2. Իրադրություն և ասույթ

Լեզվական հաղորդակցումը ասույթային հաղորդակցում է, խոսքն ասույթակազմ բնույթ ունի: Խոսքային ասույթի լեզվական հիմքը՝ նախադասությունը, ներառում է մյուս լեզվական միավորները: Հնչյունները, ձևույթները, բառերը<sup>22</sup> իրական գոյություն ունեն նախադասության մեջ և հանում

17 **Маринетти Ф. Т.**, Технический манифест футуристской литературы, Называть вещи своими именами: Программные выступления мастеров западно-европейской литературы XX века, М., «Прогресс», 1986, с. 163.  
18 **Тара Т.**, Манифест дада 1918, «Альманах дада», М., «Гилея», 2000, с. 97.

19 **Винокур Г. О.**, Футуристы – строители языка, «Филологические исследования: Лингвистика и поэтика», М., «Наука», 1990, с. 14.

20 **Աթայան Է. Ռ.**, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., «Երևանի համալսարանի հրատարակչություն», 1981, էջ 132:

21 Տե՛ս **Платон**. Собрание сочинений в 4-х т., т. 1, М., «Мысль», 1990, էջ 667-670:

22 Յուրաբանչյուր անհատի գիտակցության մեջ ամփոփվում է բառերի ինչ-որ քանակ, որոնք պետք են գալիս միայն նախադասություն կազմելիս: Բառերի նույնպիսի շտեմարան կարող է համարվել նաև բառարանը: Բայց բառարանն արհեստական համահավաք կազմավորում է՝ տվյալ լեզվով խոսած բոլոր անհատների բոլոր խոսքերի բաղադրիչների հանրագումար: Ամեն մի անհատ իր սահմանափակ բառապաշարն ունի: Բառարանը ներկայացնում է խոսք չկազմող, բայց բառեր իմացող մի երևակայական

ասույթի: Լեզվական միավորների շարքում նախադասության առանձնահատուկ կարևորությունը ունանց համար հիմք է դարձել անգամ լեզուն (ընդհանրապես լեզուն<sup>23</sup> կամ որևէ առանձին լեզու<sup>24</sup>) նույնացնելու նախադասությունների ամբողջակցության հետ: Սակայն բոլոր նախադասությունների համակցությունն իրականում հսկայածավալ խոսք է, ոչ թե լեզու: Այն համաշխարհային ընդգրկումով դիտարկվելու դեպքում համաշխարհային **խոսքն** է, որևէ լեզվի շրջանակներում՝ տվյալ ժողովրդի ողջ խոսքը: Լեզու-խոսք շրջապատույտի մեջ դա լեզվի դրսևորումն ու միաժամանակ հիմքն է, բայց նույնական չէ լեզվին:

Հնչյունային կազմ ունենալով՝ նախադասությունն ունի իր հնչականությունը, այսինքն՝ հնչյունների առաջնային հատկանիշը՝ հնչումը, նաև նախադասության հատկանիշներից մեկն է: Նախադասության ձևային կազմը հիմք է դառնում նրա նշանակյալի ձևավորման համար. արտալեզվական հարաբերակցի ներկայացումը, որը ձևային ձեռքբերումն է, նրանից փոխանցվում է բառին, ապա՝ նաև նախադասությանը՝ էլ ավելի զորեղացած ու հիմնավորված՝ դառնալով նախադասության հաջորդ կարևորագույն հատկանիշը: Նախադասության բառային կազմը որոշում է նախադասության քերականական կառուցվածքը: Իր բաղադրիչ բառերից նախադասությունը վերցնում է իմաստալից բաղադրիչներից կազմված լինելու ընդհանուր սկզբունքը. ակնհայտ և բացատրելի իմաստաքերականական կառուցվածքը նախադասության ևս մեկ բնութագրիչ հատկանիշ է: Այսպիսով՝ նախադասության մակարդակում ամփոփվում են հնչյունի, ձևային և բառի փորձառությունները, և դրանց առաջնային բնութագրերն իրենց լիարժեք դրսևորումն են ստանում նախադասության մեջ, իսկ նախադասությունը բնութագրվում է նրանց համակցությամբ: Հնչյունը, ձևային և բառը ոչ միայն նախադասության բաղադրիչներ են, այլև հնչման, նշանակման և կառուցման սկզբունքների նախնական կրողներ, և նախադասությունն օժտված է այդ երեք մակարդակների միավորների հատկանիշներով. ոչ միայն բաղադրիչի հատկանիշն է պահպանվում բաղադրության մեջ, այլև նախադասության՝ որպես ամբողջի մեջ կրկին գործում են այն հիմնարար սկզբունքները, որոնք լեզվի մեջ ներբերում են այդ միավորները: Ընդ որում այդ սկզբունքները նախադասության մեջ պարզ կրկնությամբ չեն դրսևորվում, այլ հարստացվում են նոր երանգներով և դրա շնորհիվ նոր, մինչ այդ չեղած մարմնավորումներ են ստանում:

Ասույթի հնչումը սոսկ նրա արտահայտությունը կազմող հնչյունների հնչումների համակցությունն է. հնչումների շղթայակցումը հագեցվում է հնչերանգով, որի շնորհիվ ասույթի արտահայտությունը մի կողմից՝ ամբողջականություն է ստանում, մյուս կողմից՝ մտային թափանցիկություն և հատկապես հուզական լիցք: **Հնչերանգայնությունը** նախադասության մեջ կատարվող հավելումն է արտահայտությանը. եթե հնչյունը, ձևային և բառը

գերանհատի բառապաշարը: Դրանով բառարանը մի հավելյալ աստիճանով հեռու է խոսքից. իրական անհատն այդ անիրական գերանհատի բառապաշարից նախ պիտի բառը տեղափոխի իր անհատական բառապաշարի մեջ և միայն դրանից հետո ի վիճակի կլինի օգտագործելու այն որպես նախադասության կառուցանյութ:

23 Տե՛ս **Витгенштейн Л.**, նշվ. աշխ., էջ 18:

24 Տե՛ս **Блумфильд Л.**, Ряд постулатов для науки о языке (**Звегинцев В. А.**, История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях, ч. II, М., «Просвещение», 1965, էջ 201):

արտահայտության տեսանկյունից բնութագրվում են հնչականությամբ, ապա նախադասությունը՝ հնչականության և հնչերանգայնության (հնչման և հնչերանգի) զուգակցումով: Ասույթի հնչերանգի առանձնահատուկ կարևորությունն է հնարավոր դարձրել «երգող արարած» լինելը խոսող մարդու բնութագրիչ դարձնելը<sup>25</sup>: Նախադասության պարտադիր հնչերանգայնությունն է լեզվի ծագման մասին խորհրդածությունն ուղղորդել դեպի երաժշտության հետ լեզվի ներքին կապվածության գաղափարը<sup>26</sup>: Հնչերանգի անմիջական տեղեկատվականությունը և խոսքում հնչյունահամալիրի անխուսափելիորեն հնչերանգավորված արտաբերումն են մղել հնչերանգը քերականական կարգավորվածությունը կանխորոշող<sup>27</sup> և բառային իմաստալիցության համեմատ նախնական<sup>28</sup> համարելուն:

Աշխարհը կամ նրա մի հատվածը մարդուն տրված է որպես այսպահասին իրադրություն, և աշխարհի իրեն ներկայացրած իրադրությունն ու իր մեջ այդ իրադրության մտային բեկումն է մարդը ներկայացնում ասույթով: Այդ անելու համար դատողական միտքը «Բաժանիր, որ տիրես» փորձված սկզբունքով վերլուծում, մասնատում է իրադրությունը, բաժանում այն, «ինչ որ Աստված միացրեց»: Առանձնացված մասերին բառային նշանակումներ են տրվում, որոնք արդեն իսկ իրենց առկայությամբ ամրագրում են կատարված առանձնացումը: Ասում են, թե բառերն իրերի նշաններ են: Գուցե ավելի ճիշտ կլիներ ասել, որ բառերն իրերի առանձնացման նշաններ են: Բառը վերլուծության, բաժանման գործիք է: Հետո կատարվում է առանձնացված բաղադրիչների համադրում, վերամիավորում վերլուծական լեզուներում՝ խճանկարի, համադրական լեզուներում՝ կցապատկերի (փազլի) սկզբունքով: Այդ համադրումն իրականացվում է նախադասության մեջ և նախադասության միջոցով: Նախադասությունը գործածվում է որպես համադրման գործիք: Թեև երկու գործընթացներում էլ լեզուն ու միտքը համատեղ են գործում, այնուամենայնիվ կարելի է ասել, որ միտքը լեզվի օգտագործումով բաժանում է, լեզուն՝ մտքի օգտագործումով միացնում<sup>29</sup>: Դերերի այսպիսի բաշխումն է պատճառը, որ տրամաբանության համար ելակետային արժեք ունեն ինքնաբավ հասկացությունները, որոնք իրերի դասաբաշխությունն են ներկայացնում, իսկ լեզվաբանության համար «վերին մակարդակի» միավոր է նախադասությունը, որը բառերի կապակցումով իրագործում է իրադրության պատկերումը:

Տրամաբանությունը նույնպես հասկացությունների կապակցություն է դիտարկում, սակայն իրականության պատկերումը դատողություն կազմելու առաջնային նպատակը չէ, այլ սոսկ հնարավոր արդյունքներից մեկը: Միայն իրադրությունից անկախ դատողությունն իր արքիոմային կանոններով կազմելուց հետո է տրամաբանությունն անդրադառնում դատողության՝

25 Տե՛ս Գումբոլդտ **Վ. ֆոն.**, Избранные труды по языкознанию, М., «Прогресс», 1984, էջ 81:

26 Տե՛ս **Րուսո Ժ.-Ջ.**, Избранные сочинения, т. 1, М., «Гослитиздат», 1961, էջ 250-267:

27 Տե՛ս **Ավետյան Է. Գ.**, Природа лингвистического знака, Ер., «Митк», 1968, էջ 117-118:

28 «Բառը պարզորոշվում է հնչերանգային հավելորդայնությունը «մինչև վերջ ասված դարձնելու» միջոցով» (նույն տեղում, էջ 139): Ավելի սահմանափակ ընդգրկումով՝ բանաստեղծություն գրելու անձնական փորձառության նկարագրության մեջ, նման հավաստիացում է անում բանաստեղծը (տես **Վալերի Ս.**, Об искусстве, М., «Искусство», 1976, էջ 410-412):

29 Այլ մեկնաբանությամբ՝ դատողականությունը բաժանում է, բանականությունը՝ միացնում (տես **Ավետյան Է. Գ.**, Смысл и значение, Ер., «Изд-во Ереванского ун-та», 1979, էջ 222):

իրականությանը համապատասխանելու հարցին, մինչդեռ լեզվաբանությանն առաջին հերթին հենց այդ համապատասխանությունն է մտահոգում: Տրամաբանի համար դատողությունը մտային կառույց է, լեզվաբանի համար նախադասությունը իրականությունը ներկայացնող մտային կառույց է: Տրամաբանության կանոններն իրականությանը համապատասխանող դատողություններ կազմելու կանոններ չեն. դրանք հավասարապես կիրառելի են թե՛ ճշմարիտ, թե՛ կեղծ դատողություններ կազմելու համար: Այդպես ճշմարտության ուղեցույց լինելու կոչված գիտությունը նույն հաջողությամբ ծառայում է նաև ստին: Հրաժարվելով իրադրականությունից՝ տրամաբանությունը չի կարող միայն իր կանոնների միջոցով տարբերել ճշմարիտն ու կեղծը պարզ դատողության մեջ. այդ անելու համար նա պիտի դուրս գա իր փակ համակարգից և հաշվի նստի իրականության հետ: Իսկ տրամաբանությունը հետևողականորեն հրաժարվում է այդպես վարվելուց<sup>30</sup> և իրականության հետ կապի դիտարկումը կատարում է (որքան էլ ծավալուն լինի այդ դիտարկումը) միայն որպես երկրորդ քայլ: Դեռևս Հին Հունաստանից հայտնի պարադոքսում իր հայրենակիցներին ստախոսության մեջ մեղադրող կրետեցու բարոյական նկարագիրը կամ Շրյոդինգերի՝ սև արկղի մեջ գետեղած կատվի (ելքերի հնարավորությամբ նույնական մեկ այլ դեպքում՝ ջրից հանված երկարաքիթ փայտե տղայի) կենսաբանական վիճակը անորոշ է մնում վերացական արտաիրադրական ընդհանրականության ձգտման հետևանքով, երբ հատկորոշիչ ասույթում գործածվում է «բոլոր» քանակային որոշարկիչը, իսկ վիճակագրական ասույթում՝ «որևէ»-ն: Ամեն մի կոնկրետ իրադրության մեջ ամեն մի կոնկրետ կրետեցու վերաբերյալ կարելի է որոշել՝ նա տվյալ դեպքում հավատարիմ է մնում տարածաշրջանային ավանդույթին, թե խախտում է այն: Ամեն մի անգամ կարելի է պարզել արկղից արդեն հանված կոնկրետ կատվի ճակատագիրը: Հենց կոնկրետ կրետեցիներն ու կոնկրետ կատուններն են հայտնվում լեզվաբանական վերլուծությունների կիզակետում. քանի որ **այս** ասույթը վերաբերում է **այս** կրետեցուն, արկղից հանված **այս** կատվին, ուրեմն և լեզվաբանը չի կարող ասույթի բովանդակության իր վերլուծության մեջ նկատի ունենալ մյուս կրետեցիներին ու ուրիշ կատուների: «Իսկ ի՞նչ կլինեն, եթե այս մեկի փոխարեն լիներ մեկ ուրիշը» հարցին լեզվաբանը կտա ոչ թե գոյաբանական, այլ լեզվաբանական պատասխան. «Կկազմվեր ուրիշ իրադրության վերաբերող ուրիշ ասույթ»:

Նախադասության կազմի մեջ մտնող բառերի և այդ բառերի կազմի մեջ մտնող ձևայինների նշանակյալները նախադասության նշանակյալի երկու համագործակցող շերտեր են ձևավորում: Դրանցից մեկով նշանակվում են նախադասությամբ ներկայացվող իրադրության բաղադրիչները, մյուսով՝ նրանց անվանումների հիմք դարձած հատկանիշները: Սակայն նախադասության բովանդակությունը չի սպառվում դրանցով: Դրանք իրականության

30 Սա հիշեցնում է միանգամայն այլ ոլորտի հետ կապված իրավիճակի այսպիսի նկարագրություն. «Գերմանացի ժոմանտիկների սերը բնության նկատմամբ մեծ էր: Բայց նրանք այն սիրում էին, ինչպես Տուրգենևի մի նորավեպի հերոսն էր սիրում մի աղջկա, որի մասին ասում էր. «Սոֆյան ինձ ամենից շատ դուր էր գալիս, երբ ես նստած էի լինում մեջքով դեպի նրան, կամ թերևս նաև երբ ես մտածում կամ ավելի շատ երազում էի նրա մասին...»» (Рильке Р.-М., Ворпсведе. Огюст Роден. Письма. Стихи. М., «Искусство», 1971, с. 62):



մտային արտացոլման տարրեր են, որոնց գործնական ելքի հնարավորություն է ընձեռում նախադասությունը իր **վերաբերայնությամբ**, որոշակի իրադրության հետ վերաբերական կապ հաստատելու և դրանով այդ իրադրությունն առավել կամ պակաս (մտքի կառուցման կամ հաղորդակցման համար բավարար) որոշակիությամբ ներկայացնելու բացառիկ կարողությամբ: Նշանակյալը մինչև վերաբերյալ ճանապարհն անցնել կարող է միայն իր ներունակ վերաբերական կարողությունը որոշակի վերաբերական դիտավորության վերածելու դեպքում: Միակ տեղը, որտեղ նա կարող է այդ անել, նախադասությունն է: Վերաբերայնությունը նախադասության մեջ կատարվող հավելումն է բովանդակությանը. եթե ձևույթը և բառը բովանդակության տեսանկյունից բնութագրվում են նշանակյալ ունենալով, ապա նախադասությունը՝ նշանակյալի և վերաբերայնության զուգակցումով:

Երբ իրադրության մասին ինչ-որ բան է ասվում, առերևույթ ասույթն է կցվում իրադրությանը: Բայց այդպես է միայն խոսքը հաղորդողի տեսանկյունից: Ընկալողն ընթանում է հակառակ ուղղությամբ. գտնում է ասույթում ներկայացվածին համապատասխանող իրադրություն և այդ իրադրությունն է կցում ասույթին. նա վարվում է, ինչպես խուզարկուն, որը, լուսանկարը ձեռքին շուրջը նայելով, լուսանկարում եղածին նման դեմք է որոնում: Ասույթը հանելուկ է, որը խոսքն ընկալողը պիտի լուծի: Այդ հանելուկայնությունը («հանելուկությունը», եթե կարելի է այդպես ասել) տեքստում ավելի է մեծանում և այնպիսի չափերի է հասնում, որ միանշանակ լուծման որևէ հույս չի մնում: Մինչդեռ ասույթը լուծում ունեցող և լուծում պահանջող հանելուկ է: Այդ լուծումն ասույթի արտալեզվական կամ գոնե արտասույթային հարաբերակիցն է՝ ասույթից դուրս գտնվող վերաբերյալը: Տեքստի համար ոչ մի երաշխիք չկա, որ պատասխանը նրանից դուրս է, այն կարող է և հենց տեքստի մեջ լինել, քանի որ տեքստը (հատկապես գեղարվեստական տեքստը) ընդունակ է իր իրականությունը ստեղծելու: Տեքստի ասույթներից որևէ մեկը, տեքստից կտրված ու որպես ինքնուրույն ասույթ դիտված, դեռ կարող է վերաբերական որոնումների ազդակ դառնալ: Սակայն այդ նույն ասույթը՝ որպես տեքստի բաղադրիչ, ուղղակիորեն չի հարաբերակցվում իրականության հետ, այլ միայն ամբողջ տեքստի թելադրանքով. նրա վերաբերական հանելուկի լուծման բանալին տեքստն է տալիս, տեքստն է ուղղորդում դեպի այն իրականությունը, որում իր բաղադրիչները վերաբերյալ ունեն: Այդպիսի իրականություն լինելու հավանական հավակնորդ է օբյեկտիվ իրականությունը, հավանական, բայց ոչ միակ: Դժվար թե որևէ մեկի մտքով անցնի այնտեղ փնտրել, օրինակ, «Իլիականի» կամ նրա որևէ հատվածի վերաբերյալ(ներ)ը:

Նախադասության մեջ իրադրության բովանդակային վերլուծում-համադրումը ընկալելի կարող է լինել արտահայտության մեջ դրսևորվածության դեպքում: Հակառակ դեպքում նախադասությունը կնշանակի իրադրությունը հիերոգլիֆի նման, որը, տեղեկություն չտալով հողաբաշխ արտահայտության մասին, ինքն իրեն զրկում է բովանդակությունն ակնառու ներկայացնելու հնարավորությունից և միայն իրադրության ամբողջակա- նությունն է ի ցույց դնում: Իրադրության այդպիսի զուտ բովանդակային, «հիերոգլիֆային» ներկայացումը պակաս կարոտ չէր լինի վերլուծման ու

վերծանման, քան ինքը՝ իրադրությունը: Կարելի է ենթադրել, որ այն նույնիսկ հողաբաշխ հնչյունի կարիքը չէր զգա, քանի որ անհողաբաշխ հնչյունահամալիրն ավելի համապատասխան կլիներ նրա ոգուն: Բովանդակության ներքին կազմակերպումը պիտի արտահայտված լինի: Դրա միակ հնարավոր ձևը արտահայտությունը նույն կերպ կազմակերպելն է: Որոշակի կառուցակերպը ոչ միայն բովանդակության ու արտահայտության համաձևությունն է ապահովում, այլև նրանց համար ընդհանուր լինելով՝ կապ է հաստատում նրանց միջև: Այդպես է ընդհանրապես լեզվում, այդպես է նաև նախադասության մեջ: Կառուցակերպը հատկապես նախադասության մեջ գերազույն կարևորություն է ձեռք բերում: Նախադասությունը հասկանալի է լինում հասկանալի բաղադրիչներից կազմված լինելու շնորհիվ: Կառուցակերպով ամբողջացված նախադասությամբ ներկայացվում է մասնատված իրադրությունը (այդպիսի հնարից օգտվում են մաթեմատիկոսները, որոնք քողազերծում են թվերը՝ դրանք ներկայացնելով որպես արտադրիչների արտադրյալ կամ գումարելիների գումար): Ասույթի լեզվական ոսպնյակի մեջ ոչ թե ուղղակիորեն իրադրությունն է բեկվում, այլ իրադրությունը մտային ոսպնյակի մեջ բեկելով կազմված պատկերը՝ իր կառուցվածքով. «Նախադասությունը կարող է իրադրության պատկեր լինել միայն այն բանի հետևանքով, որ այն տրամաբանորեն կառուցադրված է»<sup>31</sup>: Քանի որ լեզվական պատկերը մտայինի միջնորդավորումով է կապվում իրադրության և նրա կառուցվածքի հետ, պարզ է, որ իրադրության լեզվական պատկերը կրկնակի բեկում անցած պատկեր է. նրա մեջ իրադրության կառուցվածքի արտացոլման մասին կարելի է և պետք է խոսել՝ չնոռանալով, որ այդ պատկերն իր ստեղծման ճանապարհին երկու շեմ է անցել և ստիպված է եղել ենթարկվել այդ երկու շեմերի պահապանների պահանջներին (ինչպես դիպուկահարն է, օրինակ, քանու հաշվառումով ձշտում անում նշանառության ժամանակ):

Ասույթը ոչ թե ցուցադրում, այլ միայն ակնարկում է իրադրությունը: Ասույթի կառուցվածքը ներկայացնում է ոչ թե իրադրությունը՝ իր ամբողջության մեջ, այլ միայն բաժան-բաժան արված ամբողջական և միասնական իրադրության որոշ մասեր: Ասույթ կազմող իրադրությունը բաղադրիչների տրոհելուց հետո այդ բաղադրիչների մի մասն առանց խղճի խայթի դեն է նետում՝ թողնելով միայն այն, ինչ իր կարծիքով առանցքային է իրադրության համար, իրադրության կմախքն է կազմում: Այդ կմախքը միս ու արյունով լրացնելու հոգան ու պատասխանատվությունն ամբողջությամբ դրված են ընկալողի վրա: Ասվածը (ներառյալ փոխաբերություններով քողարկված իմաստային թիրախները և անուղղակի խոսքային ակտերի այլատությունները) հասկանալուց հետո նա ձգտում է նաև վերստեղծելու այն, ինչ հանված է ամբողջական պատկերից: Բոլոր հույսերը կապվում են ընկալողի ստեղծագործական ունակության հետ, ընդ որում պայմանով, որ նա նաև կկարողանա կռահել, թե հատկապես ինչն է, որ առկա է իրադրության մեջ, բայց բացակայում է ասույթում: Բարեհաջող հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ընկալողի վերականգնողական գործությունը համակշռի

31 Витгенштейн Л., 42վ. աշխ., էջ 21:

հաղորդողի կազմաքանդական զորությանը: Իսկ եթե այն գերակշռի<sup>32</sup>, ընկալողը կարող է նաև պատկերացնել ավելի հարուստ իրադրություն, քան իր ընկալած ասույթի հիմքում եղածը (ինչպես, օրինակ՝ պատից կախված հանրահայտ հրացանի նկարագրության մեջ): Ներկայացվող իրադրությունը նախորդում է ասույթին, հաղորդված ասույթի համեմատ անցյալ է՝ ըստ հաղորդողի: Իրադրության պատկերացումը հաջորդում է ասույթին, ասույթի ընկալման համեմատ ապագա է՝ ըստ ընկալողի: Հաղորդակցումը, այսպիսով, կապված է հաղորդողի հիշողության և ընկալողի երևակայության հետ: Այդ երկուսի միջև՝ նրանց տիրույթների խաչաձևման կետում է գտնվում ասույթը, որն իր ներասույթային ներկայում փորձում է նրանց զուգակցում ստեղծել: Ասույթում փաստացիորեն առկան այն է, ինչ ընդհանուր պիտի լինի հաղորդողի և ընկալողի ունեցած իրադրապատկերներում: Երկու պատկերների ընդհանուր մասը հավակնություն ունի լինելու նրանց անփոփոխակը: Այդ հավակնության իրականացման հավանականությունը մեծանում է պատկերների տարբերությունների գումարային արժեքի նվազմանը զուգընթաց. այն դեպքերում, երբ այդ արժեքն այնքան մեծ չէ, որ անհնար դարձնի այդ պատկերները միևնույն անփոփոխակի շրջանակի մեջ որպես նրա տարբերակներ ներառելը, տեղեկատվության հաղորդումը հաջողված է համարվում, որքան էլ մուտքային և ելքային տեղեկատվությունների բացարձակ համընկնում չլինի:

Հաղորդակցման երկու մասնակիցների միջև գտնվելով՝ ասույթը դուրս է գտնվում երկուսից էլ, այդ թվում՝ նաև նրանից, ում ջանքերով ինքը ստեղծվել է (հաղորդողն արտաբերում է ասույթը. դրա հակադրությամբ կարելի է ասել, որ ընկալողը ասույթն իրենը դարձնելու համար նախ պիտի ներբերի այն): Հաղորդակցման սկզբնակետում ու վերջնակետում անհատական լինելով հանդերձ՝ ասույթը միջակա օղակում այդ անհատներից դուրս գտնվելու փաստով ստանում է վերանհատական արժեք: «Այսպիսով՝ միտքը կարող է մարմնավորված լինել նախադասության մեջ, որն ավելի շատ է համապատասխանում նրա անկախությանը մտածողից»<sup>33</sup>: Վերանհատական լինելու հետևանքով ասույթը ձերբազատվում է հաղորդակցվող անհատներից ենթակայությունից, ավելին, անգամ ինքն է նրանց ծառայեցնում իրեն. նրանցից մեկը գործում է հանուն ասույթի, մյուսը՝ ասույթի հիման վրա: Լեզուն իր կանոններով կազմակերպում է հաղորդակցումը, կանխորոշում հաղորդակցման մասնակիցների գործողությունները, սահմանագծում նրանց ազատությունը: Այս հանգամանքը մարդու վրա լեզվի իշխանության մասին խոսակցությունների հայեցակետերից մեկը կարող է դառնալ:

Նախադասության կառուցվածքային բջիջները բառերն են, որոնք իրենք էլ իրենց կառուցվածքն ունեն: Բառերի բաղադրիչ ձևայիններն այդ բառերի միջոցով նաև նախադասության կառուցվածքի մաս են դառնում (այս փաստով է առաջնորդվում Բլումֆիլդը, որը նախադասության մեջ հաջորդաբար անմիջական կազմիչներ առանձնացնելիս չի էլ նկատում, որ հատել է բառային միավորների սահմանը, և կանգ է առնում միայն այն ժամանակ, երբ բախվում է ձևայիններին): Սակայն նախադասության կառուցվածքը չի նույ-

32 Հմնտ. «Թող որ մեկը սրինգ հանձարեղ նվագի, Ավելի հանձարեղ նրան Գուք եք լսել» (Ա. Դեմենտև):  
33 **Фере Г.**, Логика и логическая семантика: Сборник трудов. М., «Аспект Пресс», 2000, с. 313:

նանում բառային կառուցվածքների կցմանը: Իրադրության կառուցվածքը չի կարող ուղղակիորեն հանգեցվել հասկանիչներին, որոնցով բնորոշվում են իրողությունները. իրադրությունը «իրերի դրություն» է: Դա նշանակում է, որ նախադասության կառուցվածքում ձևայիններն ինքնուրույնաբար չեն գործում, նրանք նախադասության մեջ հայտնվում են համապատասխան բառերի օգտագործման հետևանքով, որպես երկրորդ գորաշարք, իսկ գլխավոր դերը պատկանում է բառերին. բառերի միջև հաստատվող քերականական հարաբերություններով է ձևավորվում նախադասության կառուցակերպը: Նախադասությունը կառուցման սկզբունքի բառային դրսևորումը չի ընդօրինակում, այլ հասնում է անհամեմատ ավելի մեծ ընդգրկման և ավելի մեծ հստակության՝ թույլ տալով, որ իր բաղադրիչները բովանդակային և գործառական զգալի ինքնուրույնություն հանդես բերեն: Սակայն բառերի միջև ցանկացած կապի առկայությունը դեռևս բավարար չէ նախադասություն ստանալու համար: Լեզվական կառույցները խոսքին փոխանցելու համար նախադասությունը պիտի ունակ լինի իրադրությանը կցվելու, նրա մասին ասվելու՝ նրան ստորոգվելու: **Ստորոգայնությունը** նախադասության մեջ կատարվող հավելումն է կառուցվածքին: Եթե բառը կառուցվածքի տեսանկյունից բնութագրվում է բովանդակային հիմնավորում ունեցող հստակ կառուցակերպով, ապա նախադասությունը՝ նույնպիսի կառուցակերպի և ստորոգայնության զուգակցումով: Ստորոգայնությունը նախադասության հաղորդակցական ելքի հավաստի հնարավորությունն է. ստորոգայնությամբ օժտված են այն բոլոր լեզվական կառույցները, որոնք կարող են խոսքային իրայնացում ստանալ որպես ինքնուրույն ասույթներ:

«Ստորոգում» անվանումը մենիմաստ չէ. այն տրվում է երկու հարաբերությունների, որոնք թեև կապված, բայց տարբեր են: Մեկը տրամաբանական հիմք ունի. դա երկկազմ նախադասության ենթակայի և ստորոգյալի իմաստաքերականական հարաբերությունն է՝ ստորոգյալի նշանակյալի վերագրումը ենթակայի նշյալին (ենթակայի մասին ստորոգյալի միջոցով ինչ-որ բան ասելը), որը ծագումով կապված է դատողության սուբյեկտի և պրեդիկատի տրամաբանական հարաբերության հետ, քանի որ նախադասության կառուցվածքը ձգտում է համապատասխանելու մտքի կառուցվածքին՝ բոլոր տարբերություններով հանդերձ: Սա **քերականական** ստորոգումն է: Լեզվաբաններն այս ստորոգումը երբեմն «տրամաբանական» են կոչում՝ նկատի ունենալով նրա ծագումը, սակայն գերադասում ենք նրան տալ «քերականական» անվանումը, որը կարող է վերաբերել բոլոր երկկազմ նախադասություններին, մինչդեռ բառի բուն իմաստով տրամաբանական ստորոգում (սուբյեկտի և պրեդիկատի հարաբերություն) կարող է արձանագրվել միայն պատմողական նախադասություններում, քանի որ տրամաբանների համոզմամբ միայն դրանք են դատողություն արտահայտում: Մյուսը իրադրության և ասույթի խոսքային հարաբերությունն է՝ ասույթի բովանդակության վերագրումն իրականությանը (իրադրության մասին ասույթի միջոցով ինչ-որ բան ասելը). սա **հաղորդակցական** ստորոգումն է: Ելնելով նրանից, որ քերականական ստորոգումը ասույթի ներսում կայացվող հարաբերություն է, իսկ հաղորդակցական ստորոգումը դուրս է գալիս ասույթի սահմաններից, առաջինը կարելի է բնորոշել որպես ներասույթային, երկրորդը՝ որպես

արտաստույթային ստորոգում: Այս բնորոշումները ստորոգման տեսակներին անվանումներ դարձնելը, սակայն, ցանկալի չէ, քանի որ արտաստույթային կարող է համարվել ոչ միայն հաղորդակցական, այլև միջատույթային ստորոգումը՝ ներատույթային ստորոգման տեքստային կրկնակը<sup>34</sup>:

Ստորոգման լեզվաբանական մեկնաբանություններում եղած թյուրըմբռնումների հիմնական պատճառը ստորոգման այս երկու հայեցակետերի առկայության և հարաբերակցության անտեսումն է: Միայն երկուսի զուգակից հաշվառումով կարող է ստորոգման իրական պատկեր ստացվել. այդ զուգակցումը կարող է կատարվել՝ ընթանալով ընդհանուրից (հաղորդակցականից) դեպի մասնավորը (քերականականը)<sup>35</sup> կամ մասնավորից դեպի ընդհանուրը<sup>36</sup>: Իսկ երբ դատողության կառուցվածքային սխեման կրկնօրինակվում է որպես նախադասության միակ հնարավոր կառուցվածքային սխեմա, արդեն այնքան էլ համոզիչ չի հնչում այն պնդումը, թե «մենք տարբերում ենք տրամաբանական ստորոգումը քերականական ստորոգումից»<sup>37</sup>, քանի որ տրամաբանական դատողության համաբանությամբ է ուռձացվում քերականական ստորոգման կարևորությունը, և ստորոգումից մնում է միայն այնքանը, ինչքանը տեղավորվում է դատողություն արտահայտող երկկազմ նախադասության մեջ. հաղորդակցական ստորոգումն ընդհանրապես դուրս է մղվում ուսումնասիրության դաշտից: Մինչդեռ այն առկա է միշտ՝ և՛ քերականական ստորոգման հետ զուգակցված, և՛ առանց նրա: Հաղորդակցման նպատակը ասույթ կազմելը չէ, այլ ասույթն իրականությանը վերագրելը: Քերականական ստորոգումն ինքնաբավ արժեք չունի. նրա առաքելությունը հաղորդակցական ստորոգման սահուն և անարգել իրականացումն ապահովելն է: Քերականական ստորոգումն անխուսափելիորեն վերաճում է հաղորդակցական ստորոգման. «... յուրաքանչյուր դատողության մեջ... անցում է կատարվում մտքի աստիճանից նշանակության աստիճանին (օբյեկտիվի աստիճանին)»<sup>38</sup>: Հաղորդակցական ստորոգումն էլ իր հերթին իրեն առավել համարժեք լեզվական արտահայտություն է գտնում առաջին հերթին քերականական ստորոգման մեջ: Քերականական ստորոգումն իր երկփեղկվածությամբ ներքուստ համաձև է հաղորդակցական ստորոգմանը, այդ պատճառով էլ դրանցից յուրաքանչյուրը կարող է բնութագրվել մյուսի հիման վրա. այսպես՝ հաղորդակցական ստորոգման մեջ իրադրությունը գրավում է ենթակայի տեղը, իսկ ասույթն ամբողջությամբ՝ ստորոգյալի, կամ, ընդհակառակը, քերականական ստորոգման մեջ ենթական ներկայացնում է իրականության բևեռը<sup>39</sup>, իսկ ստորոգյալում ամփոփվում է բուն ասելիքը:

Քերականական ստորոգում պարունակող երկկազմ նախադասությունը հաղորդակցական ստորոգման բացահայտության երաշխավորն է, որ ամենին չի նշանակում լինել հաղորդակցական ստորոգման միակ հենարանը:

34 Տեքստում մեկը մյուսին հաջորդող նախադասությունների կապը ստորոգական համարելու մասին տես **Աթայան Է. Ռ.**, նշվ. աշխ., էջ 208-209, 215, **Գյուլգասյան Գ.**, Քերականական կարգերի համատեղումը ստորոգման մեջ, «Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի նյութեր», Եր., «Գիտություն», 2015, էջ 56:

35 Տես **Աթայան Է. Ռ.**, նշվ. աշխ., էջ 192-207:

36 Տես **Աբրահամյան Ս. Գ.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., «Լույս», 1969, էջ 270-275:

37 **Աթայան Է. Ռ.**, Նախադասության մասին «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, N 1 (64), էջ 55:

38 **Փքեր Դ.**, նշվ. աշխ., էջ 235:

39 Իրականության հետ ենթակայի կապի անմիջականության մասին տես **Աթայան Է. Ռ.**, նշվ. աշխ., էջ 175:

Հաղորդակցական ստորոգման միտումով տոգորվում և այդ ստորոգմանը ծառայեցվում են նաև քերականորեն ոչ ստորոգական լեզվական կառույցներ՝ բառակապակցություններ և անգամ առանձին բառեր: Ստորոգայնությունը՝ որպես բոլոր նախադասությունների հատկանիշ, որպես նրանց ասությանցման հիմք, առաջին հերթին հաղորդակցական ստորոգման հետ է կապված, իսկ քերականականի հետ՝ այնքանով, որքանով նրա հետ կապված է հաղորդակցականը:

Հնչերանգայնությամբ հագեցված հնչականությունը, վերաբերայնությամբ հագեցված նշանակյալը, ստորոգայնությամբ հագեցված կառուցակերպը նախադասության առանցքային բնութագրիչներն են: Ուշադրության է արժանի հենց այս երեքին տարբեր ուսումնասիրողների տված գնահատումների՝ գրեթե նույնականության համնող նմանությունը: Հնչերանգի մասին. «Հնչերանգը հնչյունային նյութի հոգին է»<sup>40</sup>: Նշանակյալի մասին. «... անվանման, ասես ինչ-որ շնչավոր էակի մեջ հնչյունը մարմինն է, իսկ նշանակությունը՝ հնչյունի հոգին»<sup>41</sup>: Ստորոգման մասին. «... ստորոգումը լեզվի շունչն է ու շնչառությունը, նրա ոգին է»<sup>42</sup>:

Հնչերանգի վերլուծություններում հաճախ խոսվում է նախադասության **հնչերանգային ուրվագծի** մասին: Նույն մոտեցումը կիրառելի է վերաբերայնության և ստորոգայնության կապակցությամբ: Նախադասության վերաբերայնությունն ի հայտ է գալիս, կարելի է ասել, որպես **վերաբերական ուրվագիծ**՝ նախադասության հնարավոր վերաբերական ընդգրկման մասին պատկերացում: Նույն կերպ ստորոգայնությունն ի հայտ է գալիս որպես նախադասության **ստորոգային ուրվագիծ**՝ ստորոգային բաղադրիչի հաշվառումով ձևավորվող կառուցակերպ՝ խորքային և մակերեսային ստորոգումների շարժունակ ենթակարգային համակցություն:

Նախադասության հնչերանգային, վերաբերական և ստորոգային ուրվագծերն իրայնացվում են խոսքում: Մինչ այդ նրանք՝ որպես լեզվական միավորի հատկանիշներ, հնարավորության, ներունակության ոլորտում են գտնվում և սպասում են իրենց «խոսքային ժամին»: Հնարավորությունն ընդամենը իրայնության հեռանկար է, որը դեռ պիտի անցնի գործունացման քուրայով: Հնչերանգային, վերաբերական և ստորոգային ուրվագծերն այս առումով ներկայանում են որպես **հնչերանգային հեռանկար, վերաբերական հեռանկար և ստորոգային հեռանկար**: Այդ հեռանկարների գործունացումը տեղի է ունենում միաժամանակ ընթացող **հնչերանգավորման, վերաբերման և ստորոգման** միջոցով:

Ներունակից իրայնացածին անցումը անցում է ընդհանուրից մասնավորին: Այդպիսի անցումը չի կարող գերծ լինել բազմակիացումից, հետևաբար հեռանկարի և նրա այս կամ այն իրայնացած մարմնավորման միջև միագիծ ու միանշանակ ամբողջական համապատասխանություն չկա, և միևնույն հեռանկարի բազմաթիվ, հաճախ իրարից բավականին տարբեր (բայց և ճիշտ հաշվարկման դեպքում կանխագուշակելի) իրայնացումներ ներկայացնող ասություններ կարող են լինել: Այս հանգամանքը հաշվի առնե-

40 Аветян Э. Г., Смысл и значение, с. 206:

41 Блаженный Августин, Творения, т. 1, Об истинной религии. СПб., «Алетейя», Киев, «УЦИММ-Пресс», 2000, с. 249:

42 Գյուլգայան Գ., նշվ. աշխ., էջ 57:

լը կնպաստի որոշ հապճեպ գնահատումներից հրաժարվելուն: Որևէ իրա- նացած ասույթ ճիշտ կարող է գնահատվել ոչ թե մեկ ուրիշ ասույթի, այլ համապատասխան հեռանկարի հետ համեմատությամբ: Մինչդեռ կանոնա- նմուշի (էտալոնի) սխալ ընտրությունը հաճախ հանգեցնում է նրան, որ որևէ կառույց անլիարժեք է համարվում սոսկ այն պատճառով, որ նման չէ գու- գահեռաբար գործածվող մեկ այլ կառույցի: Այդպես է, օրինակ, երկկազմ նախադասությունը հռչակվում նախադասության ոչ միայն օրինակելի, այլև պարտադիր նմուշ, իսկ քերականական ստորոգում չպարունակող միակազմ, հատկապես անվանական նախադասությունների մասին այն փոքր-ինչ տա- րօրինակ կարծիքն է հայտնվում, որ դրանք, նախադասություն չդառնալով, խոսքային միավոր են դառնում<sup>43</sup> (որ փաստորեն նշանակում է, թե բառային մակարդակից միանգամից ասես ցատկում են խոսքի մեջ): Այսպիսի մոտե- ցումը հետևանք է անվան կամ անվանական կապակցության ստորոգային հեռանկարի<sup>44</sup> վրա աչք փակելու: Եթե այդ հեռանկարը գոյություն չունենար, գոյություն չէր ունենա նաև նրա իրայնացումը (պիտի որ պարզունակության սահմանագծին գտնվող ակնհայտություն ունեցող այս պնդման կարիքը չլի- ներ. չէ՞ որ ոչ ոքի մտքով չի անցնի լրջորեն քննարկել, օրինակ, այն հարցը, թե հասուն մարդը ինչ-որ ժամանակ առաջ երեխա եղել է, թե ոչ): Սրան հակառակ՝ քերականական ստորոգում պարունակող նախադասության մեջ մի կապակցող բառի (ասենք՝ շաղկապի) հավելումը կարող է կասեցնել նրա ինքնուրույն ստորոգային հեռանկարի գործունացումը և նրա առջև ստորոգ- մանը մասնակցելու նոր հեռանկար բացել մի ավելի ծավալուն նախադա- սության մասի կարգավիճակում:

### 3. Նշանագիտական անդրադարձ

Նախադասության կազմում եղած բառերը, ձևույթները և հնչյունները իրենց նշանային հատկություններն անխուսափելիորեն փոխանցում են նա- խադասությանը: Հնչյուններ պարունակելով՝ նախադասությունը չի կարող զերծ լինել հնչյուններին բնորոշ ցուցանշանայնությունից: Ձևույթներ պա- րունակելով՝ նախադասությունը չի կարող զերծ լինել ձևույթներին բնորոշ խորհրդանշանայնությունից: Բառեր պարունակելով՝ նախադասությունը չի կարող զերծ լինել բառերին բնորոշ պատկերանշանայնությունից: Սակայն նախադասության ցուցանշանայնությունը չի սահմանափակվում հնչյուննե- րի ցուցանշանայնությամբ, խորհրդանշանայնությունը չի սահմանափակ- վում ձևույթների խորհրդանշանայնությամբ, պատկերանշանայնությունն էլ չի սահմանափակվում բառերի պատկերանշանայնությամբ: Դրանք ընդա- մենը նախադասության համապատասխան հատկությունների հիմքերն են: Հնչերանգայնության ներառումը հատկապես նախադասությանը ներհատուկ ցուցանշանայնություն է առաջ բերում: Վերաբերայնության ներառումով սկիզբ է դրվում հատկապես նախադասությանը ներհատուկ խորհրդանշա-

43 Տե՛ս, օրինակ, **Աղայան Է.**, Նախադասություն և ասություն, «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, N 1 (61), էջ 126-134:  
 44 Իհարկե, հիմնավորված և ոչ թե վերացականորեն հռչակվող հեռանկարի. հմնտ. «Դա նշանակում է արդյոք, որ բառարանում եղած ցանկացած բառ ներունակ միակազմ նախադասություն է: Դժվար թե մեկնումները համարձակվի այդպիսի պնդում անել» (**Звегинцев В. А.**, Предложение и его отношение к языку и речи, М., «Изд-во Моск. ун-та», 1976, с. 135):

նայնությանը: Ստորոգայնության ներառումը ծնունդ է տալիս հատկապես նախադասությանը ներհատուկ դիագրամային (բաղադրիչների փոխհարաբերությունը ներկայացնող) պատկերանշանայնությանը: Փիրսից մինչև մեր օրերը նախադասության այս նշանային հատկություններից հատկապես պատկերանշան լինելն է ընդգծվում<sup>45</sup>: Նախադասության պատկերանշանայնությունը հատուկ ուշադրության արժանացնելը բացատրվում է նրանով, որ նախադասության մեջ իրադրության կառուցվածքային կաղապարումը չափազանց ակնհայտ է, մանավանդ եթե նկատի ունենանք այն ճշգրտումը, որ պատկերանշանի ձևավորման համար պարտադիր չէ նշանի և նշանակման առարկայի նմանությունը բոլոր հատկանիշներով, և ավելի հաճախ բավարար է լինում սահմանափակ քանակով հատկանիշների համընկնումը<sup>46</sup>: Ավելին, պատկերանշանայնությունը նախադասության անհրաժեշտ հատկություն է. եթե բառը կարելի է հրաշալի հասկանալ՝ առանց նրա կազմում եղած բոլոր ձևույթների իմաստներն անպայման իմանալու և անգամ առանց նրա ձևույթային կազմը հստակ պատկերացնելու, ապա նախադասությունը կարող է հասկանալի լինել միայն այն որպես հասկանալի բաղադրիչների հասկանալի հարաբերություններով կազմված դիագրամ ընկալելու դեպքում: Սակայն ակնհայտ լինելը չի նշանակում միակը լինել: Նախադասությանն այդ նույն չափով անհրաժեշտ է խորհրդանշանայնությունը, որն ապահովում է իրականությանը հարաբերակցվելու կարողությունը: Նույն չափով անհրաժեշտ է նաև ցուցանշանայնությունը, որը ոչ միայն նշանակիչի դրսևորումն է, այլև տեղայնացման և եղանակավորման անփոխարինելի միջոցի դեր է կատարում: Այսպիսով՝ ցուցանշանայնությունը, խորհրդանշանայնությունն ու պատկերանշանայնությունը նախադասության նշանային բնութագրի բաղադրիչներն են: Բայց այդ նույն երեք նշանային հարաբերությունները գործում են նաև բառում: Տարբերությունն այն է, որ բառի պատկերանշանայնությունը հատուկ դեր ունի, նրա գերիշխող նշանային հատկությունն է, որը որոշ չափով ստվերում է մյուս երկուսը: Նախադասության մեջ այդպիսի գերիշխում չկա: Նախադասության մեջ երեք նշանային հարաբերությունների եռիշխանություն է հաստատված, և նրանցից ոչ մեկը գերադասված կամ ստորադասված չէ մյուսներին: Ցուցանշանայնությունը, խորհրդանշանայնությունը և պատկերանշանայնությունը հավասարապես են դրսևորվում նախադասության մեջ, հավասարապես կարևոր են նրա համար: Եթե փորձենք Փիրսի այդ տերմիններով բնորոշել նախադասությունը, այն պիտի համարվի **ցուցախորհրդապատկերանշան**՝ երեք նշանային հարաբերությունների միասնության և հավասարարժեքության վրա հիմնված նշան: Այդպիսի հարաբերակցության շնորհիվ նախադասությունը հենց Փիրսի պատկերացրած «կատարյալ» նշանն է<sup>47</sup> լեզվում, մինչդեռ Փիրսը զարմանալիորեն նույնիսկ չի ձեռնարկում լեզ-

45 Sŕu Peirce Ch. S., Collected Papers. Vol. IV. Cambridge: "Harvard Univ. Press", 1933, էջ 430, Якобсон П., В поисках сущности языка, «Семиотика». М., «Радуга», 1983, с. 107-109, Աթայան Է. Ռ., նշվ. աշխ., էջ 87, 205, Сигал К. Я., Проблема иконичности в языке (обзор литературы), «Вопросы языкознания», М., «Наука», 1997, N 6, с. 111-118:

46 Sŕu Моррис Ч. У., Основания теории знаков, «Семиотика», էջ 58:

47 «... նշաններից ամենակատարյալները նրանք են, որոնցում պատկերանշանային, ցուցանշանային և խորհրդանշանային բնույթները միախառնված են այնքան հավասար, որքան հնարավոր է» (Peirce Ch. S., նշվ. աշխ., էջ 361):



վում այդպիսի նշանի որոնում և դրանով զրկում է իրեն այն գտնելու հնարավորությունից՝ նախադասությունն առաջին հերթին պատկերանշան համարելով:

## Եզրակացություն

Աշխարհի և մարդու հոգևոր հաղորդակցումը երկու դրսևորում ունի՝ ճանաչողություն՝ տեսական բովանդակային հոսք աշխարհից դեպի մարդը, օբյեկտից դեպի սուբյեկտը, և ստեղծագործություն՝ գործնական բովանդակային հոսք մարդուց դեպի աշխարհը, սուբյեկտից դեպի օբյեկտը: Մարդու ամբողջ ստավոր գործունեությունը, որը տեղավորվում է օբյեկտի և սուբյեկտի այդ երկուողված կապի սահմաններում<sup>48</sup>, ճակատագրորեն լեզվականության լույսով է ողողված, և նախադասություն-ասույթն է այն հանգուցակետը, որում իրականանում են լեզվական ճանաչողությունն ու լեզվական ստեղծագործությունը: Ամեն իրադրության մեջ ամեն մարդու կազմած ամեն ասույթ մի տեղային անհատական խոսքային փոքր ներդրում է հարատև համատիեզերական համամարդկային համալեզվական մեծ գոյրնթացի մեջ, որում հաստատված ու շարունակ վերահաստատվող փոխհարաբերության միջոցով աշխարհը կարողանում է ինչ-որ բան տալ մարդուն, և մարդը կարողանում է ինչ-որ բան տալ աշխարհին:

**Աշոտ Ս. Աբրահամյան** – լեզվաբան, մեկ մենագրության և շուրջ 30 գիտական հոդվածների հեղինակ է, դասագրքերի, բառարանի, ուսումնամեթոդական աշխատանքների համահեղինակ, զբաղվում է լեզվի տեսության, լեզվի փիլիսոփայական և նշանագիտական վերլուծության հարցերով, հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր լեզվաբանության, լեզվափիլիսոփայության, նշանագիտության բնագավառները:

Էլ. փոստ՝ [abrahamyan.ashot@ysu.am](mailto:abrahamyan.ashot@ysu.am)

48 Հմնտ. «Իսկ չէ՞ որ իրականություն բաղադրող ցանկացած տարրի ուսումնասիրությունը ի վերջո հանգեցնում է ֆիզիկայից հետո սկսվող գիտությանը՝ տրամաբանական մի ծավալուն խաղի՝ իրեղենը վերացարկելու և վերացականը իրեղեն դարձնելու կանոնների համակարգով...» (Հովհաննիսյան Ս., Հավերժության դրսևորումը լեզվում. լեզվի տարածաժամանակային հենքը, «Լեզու, խոսք, իրականություն», միջազգային գիտաժողով, ՀՀ ԿԳՆ, Վանաձորի պետական համալսարան, Եր., «Արման Ասմանգույան» ԱՁ, 2017, էջ 110):

**THE SIGN CHARLES PEIRCE DREAMED OF**

Ashot S. Abrahamyan

**Key words** – sentence, utterance, reality, representation, situation, image, intonationality, referentiality, predicationality, contour, perspective, index, symbol, icon, diagram.

Speech is the process of utterance production. The sentence, the linguistic basis of speech utterance, includes other linguistic units: sounds, morphemes, words. When they appear in the capacity of sentence components, these units, being the primary carriers of fundamental language processes, that is, phonation, designation and structuration, not only preserve their main properties, but also pass them on to the sentence in which these properties are revealed not through simple repetition, but through absolutely new embodiments, inherent only to sentence. Here the sound combination acquires intonation, referential intention is added to the signification, and the structure becomes predicational (including both grammatical and communicative predications). Intonationality, referentiality and predicationality are most important sentence characteristics and necessary conditions for its formation. Three main aspects of the language are supplemented with them in the sentence: expression – with intonationality, contents – with referentiality, structure – with predicationality. Together they form a joint basis for the transfer from a linguistic unit to its speech usage.

By analogy with the intonational contour of the sentence it is also possible to speak on its referential contour (idea of possible referential scope) and predicational contour (flexible hierarchic combinations of deep and surface predications). Prior to speech realization and still in its “expectation”, intonational, referential and predicational contours exist as generalized features of potential utterances and remain in the sphere of virtuality. For them realization is merely a perspective. Thereby they present themselves as intonational perspective, referential perspective and predicational perspective of the sentence. Actualization of these perspectives takes place through interrelated and simultaneous processes of intonating, referring and predicating.

The word, morpheme and sound pass also their semiotic characteristics on to the sentence. The indexical aspect of the sound, the symbolic aspect of the morpheme, the iconic aspect of the word have twofold manifestations: as features of sentence components and as features of the sentence itself. Indexicality, symbolicity and diagrammatic iconicity are combined in the sentence, this combination being equal, without the dominance of one over the others. That is the very peculiarity of sentence as a linguistic sign. On these grounds the sentence-utterance can be characterized as an indexical-symbolic-iconic sign.

## ЗНАК, О КОТОРОМ МЕЧТАЛ ЧАРЛЬЗ ПИРС

Ашот С. Абрамян

**Ключевые слова** – предложение, высказывание, действительность, репрезентация, ситуация, изображение, интонационность, референциальность, предикационность, контур, перспектива, индекс, символ, икона, диаграмма.

Речь – процесс порождения высказываний. Языковая основа речевого высказывания – предложение – включает в себя другие языковые единицы – звуки, морфемы, слова. Эти единицы, являющиеся первичными носителями основополагающих языковых процессов – фонации, десигнации и структуризации, выступая в качестве компонентов предложения, не только сохраняют свои основные свойства, но и передают их предложению, в котором эти свойства проявляются не простым повторением, а в совершенно новых, присущих только предложению воплощениях. Здесь звуковая цепь насыщается интонацией, к сигнификату прибавляется референциальная интенция, а структура становится предикационной (включая как грамматическую, так и коммуникативную предикации). Интонационность, референциальность и предикационность являются важнейшими характеристиками предложения и необходимыми условиями его образования. В предложении ими дополняются три основных аспекта языка: выражение – интонационностью, содержание – референциальностью, структура – предикационностью. Вместе они составляют единую основу для перехода от языковой единицы к ее речевому употреблению.

По аналогии с интонационным контуром предложения можно говорить также о его референциальном контуре (представлении о возможном референциальном охвате) и предикационном контуре (подвижном иерархическом сочетании глубинных и поверхностных предикаций). До речевой реализации, в ее “ожидании” интонационный, референциальный и предикационный контуры существуют как обобщенные признаки потенциальных высказываний, пребывают в сфере виртуального. Реализованность для них – лишь перспектива. Тем самым они выступают как интонационная перспектива, референциальная перспектива и предикационная перспектива предложения. Актуализация этих перспектив происходит посредством взаимосвязанных и протекающих одновременно процессов интонирования, отнесения и предикирования.

Слово, морфема и звук передают предложению также свои семиотические характеристики. Индексальный аспект звука, символический аспект морфемы, иконический аспект слова проявляются в предложении двояким образом: как свойства компонентов предложения и как свойства самого предложения. В предложении сочетаются индексальность, символичность и диаграмматиче-

ская иконичность, причем в равной мере, без доминирования какого-либо из них. Именно в этом заключается своеобразие предложения как языкового знака. На этом основании предложение-высказывание может быть характеризовано как индексально-символическо-иконический знак.

## REFERENCES

1. **Abrahamyan S. G.**, Zh'amanakacic hayereni qerakanutyun, Ye'r., "Luys", 1969 **(in Armenian)**.
2. **Abramjan L.-A.**, Tetrad' Sigma. Razmyshlenija na filosofskie temy. Er., "Limush", 2008 **(in Russian)**.
3. **Agh'ayan E. B.**, Naxadasutyun masin "Banber Ye'rev'ani hamalsarani", 1988, N 1 (64) **(in Armenian)**
4. **Agh'ayan E. B.**, Naxadasutyun yev' asutyun "Banber Ye'rev'ani hamalsarani", 1987, N 1 (61) **(in Armenian)**.
5. **Avetjan Je. G.**, Priroda lingvisticheskogo znaka. Er., "Mitk", 1968 **(in Russian)**.
6. **Avetjan Je. G.**, Smysl i znachenie. Er., "Izd-vo Erevan. un-ta", 1979 **(in Russian)**.
7. **At'ayan E. R'**, Lezvakan ash'xarhi nerqin kerpavorumə yev' artaqin veraberutyunə, Ye'r., "Ye'rev'ani hamals. hrat.", 1981 **(in Armenian)**.
8. **Bjuler K.**, Teorija jazyka. Reprezentativnaja funkcija jazyka. M., "Progress", 1993 **(in Russian)**.
9. **Blazhennyj Avgustin**, Tvorenija. t. 1. Ob istinnoj religii. SPb., "Aletejja"; Kiev: «UCIMM-Press», 2000 **(in Russian)**.
10. **Blumfil'd L.**, Rjad postulatov dlja nauki o jazyke, **Zvegincev V. A.**, Istorija jazykoznanija XIX-XX vekov v ocherkax i izvlechenijax. Ch. II. M., "Prosvesh'enie", 1965 **(in Russian)**.
11. **Gadamer X.-G.**, Istina i metod: Osnovy filosofskoj germenевtiki. M., "Progress", 1988 **(in Russian)**.
12. **Gumbol'dt V. fon**, Izbrannye trudy po jazykoznaniju. M., "Progress", 1984 **(in Russian)**.
13. **Gyulzatyán D.**, Qerakanakan kargerí hamategh'umə storogman mej // Hayerenagitakan mijazgayin tasnerord gitazh'oxovi nyut'er, Ye'r., "Gitut'yun" 2015 **(in Armenian)**.
14. **Frege G.**, Logika i logicheskaja semantika: Sbornik trudov. M., "Aspekt Press", 2000 **(in Russian)**.
15. **Hoqing S. U.**, Zh'amanaki hamar'ot patmut'yun: Mec' payt'yunic minch'ev' sev xor'och'ner, Yer., "Haykakan hanragit. glx. xmb.", 2001 **(in Armenian)**.
16. **Hovhannisyan S.**, Haverzh'ut'yan drsevorumə lezvim. lezvi tarac'azh'amanakayin henqə // Lezu, xosq, irakanutyun. Mijazgayin gitazh'ogh'ov / HH KGN, Vanadz'ori petakan hamalsaran, Yer., "Arman Asmangulyan" ADz' 2017 **(in Armenian)**.
17. **Losev A. F.**, Jazykovaja struktura. M.: MGPI im. V. I. Lenina, 1983 **(in Russian)**.
18. **Marinetti F. T.**, Texnicheskij manifest futuristskoj literatury // Nazyvát' veshhi svoimi imenami: Programmnye vystuplenija masterov zapadno-evropejskoj literatury XX veka. M., "Progress", 1986 **(in Russian)**.
19. **Morris Ch. U.**, Osnovaniya teorii znakov // Semiotika. M., "Raduga", 1983 **(in Russian)**.

20. **Pirs Ch. S.**, Izbrannye filosofskie proizvedeniya. M.: "Logos", 2000 **(in Russian)**.
21. **Platon**, Sobranie sochinenij v 4-x t. T. 1. M.: "Mysl'", 1990 **(in Russian)**.
22. Posh'ochina obshestvennomu vkusu. M.: "Izd. G. L. Kuz'mina", 1912 **(in Russian)**.
23. **Rassel B.**, Issledovaniya znachenija i istiny. M.: "Ideja-Press"; "Dom intellektual'noj knigi", 1999 **(in Russian)**.
24. **Rilke R.-M.**, Vorpsvede. Ogjust Roden. Pis'ma. Stixi. M.: "Iskusstvo", 1971 **(in Russian)**.
25. **Rozenshtok-Xjussi O.**, Rech' i dejstvitel'nost'. M.: "Labirint", 1994 **(in Russian)**.
26. **Russo Zh.-Zh.**, Izbrannye sochinenija. T. 1. M.: "Goslitizdat", 1961 **(in Russian)**.
27. **Shrjodinger Je.**, Moj vzgljad na mir. M.: Knizhnyj dom "LIBROKOM", 2009 **(in Russian)**.
28. **Sigal K. Ja.**, Problema ikonichnotusti v jazyke (obzor literary) // Voprosy jazykoznanija. M.: "Nauka", 1997, N 6 **(in Russian)**.
29. **Tcara T.**, Manifest dada 1918 // Al'manax dada. M.: "Gileja", 2000 **(in Russian)**.
30. **Valeri P.**, Ob iskusstve. M.: "Iskusstvo", 1976 **(in Russian)**.
31. **Vinokur G. O.**, Futuristy – stroiteli jazyka // Filologicheskie issledovaniya: Lingvistika i poetika. M.: "Nauka", 1990 **(in Russian)**.
32. **Vitgenshtejn L.**, Filosofskie raboty. Ch. I. M.: "Gnozis", 1994 **(in Russian)**.
33. **Zvegincev V. A.**, Predlozhenie i ego otnoshenie k jazyku i rechi. M.: "Izd-vo Mosk. un-ta", 1976 **(in Russian)**.

ՀԻՄՆԱԳԱՐՈՒՄ

ԺԱ (ԺԷ) քառի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԷՎ համահայկական հանդես